Արձանագրություն N 5
«ՏԿՏՏՆ-ՀԲՄԱՇՁԲ-2019/4Շ» ծածկագրով հրատապ բաց մրցույթ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«14» մայիսի 2019թ.
ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Կ. Գասպարյանը

Հանձնաժողովի անդամներ՝ Ն. Մեսրոպյանը,

Լ. Հարությունյանը, Լ. Ոսկանյանը

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Պետրոսյանը

Բացակայում է հանձնաժողովի անդամ ՝ Ա. Պապյանը,

1. Հրատապ բաց մրցույթ ընթացակարգի ստացված փաստաթղթերի մասին
(Կ. Գասպարյան)

1.1 <<Շինպլյուս>> ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել է որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը ՝ նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի), դրա հաշիվ ապրանքագրերի, պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող հանձման-ընդունման արձանագրությունների պատճենները: Ստացվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի եզրակացությունը, որի համաձայն՝ <<Շինպլյուս>> ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունի հարկային պարտավորություն:

1.2 <<Արարատ-Ճանշին>> ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել է որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը: Ստացվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի եզրակացությունը, որի համաձայն՝ <<Արարատ-Ճանշին>> ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի 104,000 դրամ հարկային պարտավորություն:

1.3 <<ԱՎԱ-2000>> ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի ներկայացրել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը: Ստացվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի եզրակացությունը, որի համաձայն՝ << ԱՎԱ-2000>> ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունի հարկային պարտավորություն:

1.4 <<Ա.Ա.Բ ՊՐՈԵԿՏ>> ՍՊԸ-ն և <<Արգիշտի-1>> ՓԲԸ-ն սահմանված ժամկետում շտկել են արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

Scanned by CamScanner

2. Հրատապ բաց մրցույթ ընթացակարգի արդյունքների գնահատման և ստացված եզրակացության ամփոփման մասին
(Կ. Գասպարյան)

2.1 Հանձնաժողովը քարտուղարի կողմից առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերի պատճենները և Կոմիտեից ստացված եզրակացությունը տրամադրվել է հանձնաժողովի անդամներին:

2.2 Հանձնաժողովը որոշեց.

- հիմք ընդունելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի եզրակացությունը՝ <<Արարատ-Ճանշին >> ՍՊԸ -ի հայտը գնահատել անաբավարար: Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 44-րդ և 45-րդ կետերով և հիմք ընդունելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի եզրակացությունը՝ <<Արարատ-Ճանշին >> ՍՊԸ -ի կողմից ներկայացված հայտը մերժել և <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն համապատասխան ընթացքը լուծելու համար: Մասնակցի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերին չանդրադառնալ,

- ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 44-րդ կետի 4-րդ ենթակետով <<ԱՎԱ-2000>> ՍՊԸ հայտը գնահատել անբավարար և մերժել: <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն համապատասխան ընթացքը լուծելու համար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

3. Հրատապ բաց մրցույթ ընթացակարգի հաղթող, առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ որոշում ընդունելու և հարկային հարցում կատարելու և որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերի և բանակցությունների հրավիրելու մասին
(Կ. Գասպարյան)

Հանձնաժողովը որոշեց՝

3.1 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 7-րդ մասը սույն արձանագրության 2.2-րդ կետը՝ ընթացակարգի 4-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել <<Ա.Ա.Բ ՊՐՈԵԿՏ>> ՍՊԸ-ին:

3.1 Առաջարկել ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցին երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը:

3.2 Հարկային հարցում ներկայացնել ՀՀ պետական եկամուտների կոմիտե առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից

Scanned by CamScanner

վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ:

3.3 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 7-րդ մասը, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը ինչպես նաև սույն արձանագրության 2.2-րդ կետը 6-րդ չափաբաժնի մասով<<Շանթ-Սերյան>> ՍՊԸ-ին, <<Ա.Ա.Բ Պրոեկտ>> ՍՊԸ-ին, <<Քարավան>> ՍՊԸ-ին, <<Սահակյանշին>> ՓԲԸ-ին հրավիրել միաժամանակյա բանակցությունների:

3.4 **1-ին, 2-րդ, և 5-րդ չափաբաժինների մասով՝** <<Շինպլյուս>> ՍՊԸ-ին ճանաչել ընտրված /հաղթող/ մասնակից:

3.5 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված պահանջների համաձայն՝ ընտրված մասնակիցների հետ կնքել պայմանագիր սահմանված անգործության ժամկետի (10 օրացուցային օր) լրանալուց հետո:

3.6 Փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող աշխատանքային օրվա ժամը 15:30-ին, ՀՀ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3, ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն, 2-րդ հարկ, N 208 սենյակ հասցեում:

3.7 Բանակցությունների վարման համար հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2019թ մայիսի 17-ին ժամը 15:30-ին, ՀՀ, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3, ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն, 2-րդ հարկ, 208 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Կ. Գասպարյան

Անդամներ՝ _____ Լ. Հարությունյան

_____ Լ. Ոսկանյան

_____ Ն. Մեսրոպյան

Քարտուղար՝ _____ Ա. Պետրոսյան

Scanned by CamScanner